

*Handwritten signature*

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ:  
Խ. ԱՐՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱՆԱԵՆ ՊԵՏԱԿԱՆ  
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՌԵԿՏՈՐ՝  
ՊՐՈՖԵՍՈՐ ՍՐԲՈՒՇԻ ԳԵՎՈՐԳՅԱՆ



**ԿԱՐԾԻՔ**

**Վազգեն Վահանի Հախոյանի «Վանանդի /Կարսի/ և Շիրակի նահանգներում թուրքական բանակի իրագործած զանգվածային հանցագործությունները /1920-1921 թթ./» է. 00.01 «Հայոց պատմություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ**

2024 թ. օգոստոսի 30-ին տեղի ունեցավ Խ. Արովյանի անվան ՀՊՄՀ հայոց պատմության ամբիոնի նիստը, որին մասնակցում էին ամբիոնի վարիչի պաշտոնակատար, պատմ. գիտ. թեկնածու, պրոֆեսոր Է. Գևորգյանը, պատմ. գիտ. դոկտորներ, պրոֆեսորներ Վ. Վիրաբյանը, Ս. Պողոսյանը, Խ. Ստեփանյանը, պատմ. գիտ. թեկնածուներ, դոցենտներ Է. Հովհաննիսյանը, Է. Մելքոնյանը, Ա. Եփրիկյանը, Ս. Խաչատրյանը:

Քննարկվեց Վազգեն Վահանի Հախոյանի «Վանանդի /Կարսի/ և Շիրակի նահանգներում թուրքական բանակի իրագործած զանգվածային հանցագործությունները /1920-1921 թթ./» թեկնածուական ատենախոսությունը՝ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցելու համար:

Ելույթ ունեցան ատենախոսության գրախոսներ, պատմ. գիտ. դոկտոր, Վ. Վիրաբյանը, պատմ. գիտ. թեկնածու, պրոֆեսոր Է. Գևորգյանը, ովքեր հրապարակեցին իրենց գրավոր կարծիքները: Տեսակետներ արտահայտեցին պատմ. գիտ. դոկտորներ,

պրոֆեսորներ Ս. Պողոսյանը, Խ. Ստեփանյանը, պատմ. գիտ. թեկնածու, դոցենտ Է. Հովհաննիսյանը:

Պատասխանելույթով հանդես եկավ ատենախոս Վ. Հախոյանը:

Քննարկման արդյունքներն ամփոփեց ամբիոնի վարիչի պաշտոնակատար, պատմ. գիտ. թեկնածու, պրոֆեսոր Է. Գևորգյանը:

Թուրքական իշանությունների կողմից տարբեր ժամանակաշրջաններում զանգվածային ջարդերի ենթարկված, բռնությամբ տեղահանված, իրենց բնօրրանից արտաքսված հայերի և նրանց սերունդների հայրենի օջախները վերադառնալու իրավունքի հարցը պատմագիտական և միջազգային-իրավական առումով չպետք է կորցնի իր արդիականությունը: Անգամ այն պարագայում, երբ ազգերի ինքնորոշման սկզբունքին արհեստականորեն հակադրում են պետությունների տարածքային ամբողջականության և սահմանների անձեռնմխելիության միջազգային-իրավական սկզբունքը:

Այս համատեքստում պատմագիտական որոշակի արժեք և հետաքրքրություն է ներկայացնում Վազգեն Հախոյանի «Վանանդի /Կարսի/ և Շիրակի նահանգներում թուրքական բանակի իրագործած զանգվածային հանցագործությունները /1920-1921 թթ./» թեկնածուական ատենախոսությունը: Ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից և օգտագործված սկզբնաղբյուրների և գրականության ցանկից, հավելվածներից բաղկացած աշխատանքում հեղինակը ներկայացրել է հիմնահարցի այժմեականությունը, գիտական նորույթը, գործնական նշանակությունը, ատենախոսության նպատակն ու խնդիրները, ժամանակագրական շրջանակները, ուսումնասիրության մեթոդաբանությունն ու հիմնահարցի ուսումնասիրվածության աստիճանը: Գիտական շրջանառության մեջ դնելով մեծաքանակ արխիվային, պարբերական մամուլի, պատմագիտական գրականության նյութեր, փաստաթղթերի ժողովածուներ և հուշագրություններ, բանահավաքչական աշխատանքի արդյունքներ՝ հեղինակը քայլ առ քայլ բացահայտել է հիմնահարցի առավել կարևոր կողմերը:

Անդրադառնալով թուրքական բանակի կողմից Վանանդի նահանգի հայ բնակչության զանգվածային կոտորածներին՝ հեղինակը միանգամայն իրավացիորեն ներկայացնում է 1919-1920 թթ. Կարսի մարզի հայության վերադարձի, 1920-1921 թթ. Կարս քաղաքի հայ բնակչության կոտորածների ու թալանի, թուրքական զորքերի կողմից

Վանանդի նահանգի բնակավայրերի հայաթափման պատմությունը: Պարզորոշ բացահայտվում է այն իրողությունը, որ քեմալականները ձգտում էին գրավել այն տարածքները, որտեղ ՀՀ կառավարության կողմից վերաբնակեցվում էին հայ գաղթականները և տեղահանվածները: Արդյունքում արևմտահայությունը կրկնակի ցեղասպանության էր ենթարկվում:

Ուշագրավ են նաև Շիրակի նահանգում թուրքական բանակի իրագործած զանգվածային բարբարոսությունների բացահայտումները: Անհնար է առանց ժողովրդի որոշակի հատվածի նկատմամբ լուրջ մեղադրանքի զգացումով ծանոթանալ այդ անմարդկային գործողություններին, որոնք նույն ձեռագրով շարունակվում են առայսօր, նորից մեր լուրջության պայմաններում:

Ատենախոսն ամենայն մանրամասնությամբ լուսաբանել է քեմալականների իրականացրած զանգվածային կոտորածները, վայրերը, զոհերի թվաքանակը, կոնկրետ անձանց տվյալները և այլն: Դժբախտաբար Հզազի կամ Զարդի, Ղուզղունի, Ղարաբոյայի /Խնկոյանի/ ձորերը դարձան բաց գերեզմաններ, ավելին՝ սպանդանոցներ:

Չենք կարող չհամաձայնել հեղինակի այն դիտարկմանը, որ քեմալականներն ամեն գնով մահմեդական ազգաբնակչությանը տրամադրում էին հայերի դեմ, սերմանում լիակատար թշնամանք, ինչի հետագա դրսևորումները երևացին նաև հայ խաղաղ ազգաբնակչության կոտորածներում: Նպատակը մեկն էր՝ ցամաքային կապ հաստատել Ադրբեջանի հետ: Իսկ ապացույցը 1919թ. նոյեմբերի 29-ին Կ. Պոլսում կնքված թուրք-ադրբեջանական գաղտնի դաշնագիրն էր, ըստ որի Ադրբեջանն առանց Թուրքիայի համաձայնության չպետք է դաշինք կամ համաձայնություն կնքեր այլ պետության հետ և թուրք սպաները պետք է մարզեին ադրբեջանական բանակը:

Ատենախոսը հիմնավորում է, որ Փամբակի տարածքի /Ղարաքիլիսայի գավառ/ 1920թ. կոտորածները չպետք է լուսաբանել Ալեքսանդրապոլի գավառի ջարդերի համատեքստում. 1919 թ. փետրվարի 26-ին ՀՀ նախարարների խորհրդի որոշմամբ կազմավորվել էր Ղարաքիլիսայի գավառը, իսկ արդեն 1920թ. մայիսի 25-ից այն մտնում էր Շիրակի նահանգի մեջ:

Ցավալիորեն Շիրակի նահանգում ևս 1918-1920թթ. ընթացքում հայ բնակչությունը կրկնակի կոտորածների ենթարկվեց:

Հիմնահարցն ամբողջացնելու նպատակով հեղինակն իրականացրել է Մեծ Եղեռնի և 1920-1921 թթ. թուրքական բանակի իրագործած հայերի զանգվածային կոտորածների համեմատական վերլուծություն՝ հատկապես առանձնացնելով թուրքերի ժառանգական գործելաոճը:

Ատենախոսության կարևոր արժանիքներից է նաև այն, որ աշխատանքում գետեղվել են ականատեսների մեծաքանակ հուշեր, վկայություններ, ինչպես նաև հավելվածներում հեղինակի դաշտային հետազոտության արդյունքները:

Ընդհանուր առմամբ դրական գնահատելով կատարված աշխատանքը, ցանկանում ենք արտահայտել որոշ դիտողություններ ու ցանկություններ.

1. Մեր կարծիքով ատենախոսության վերնագրի նման ձևակերպումը որոշ մտորումների տեղիք է տալիս: Այսպես, եթե մենք շեշտադրում ենք միայն թուրքական բանակի իրագործած զանգվածային հանցագործությունները, իսկ տեքստում ընդհանուր շարադրանքի մեջ և հպանցիկ, ոչ թե առանձին ենթագլխով, անդրադառնում նաև թուրք ասկյարների, քրդերի, մահմեդական խուժանի մասնակցությանը, արդյոք այդ դեպքում մենք թուրքական իշխանությունների պատասխանատվության, մեղավորության բաժինը չենք կրճատում: Դժբախտաբար, ինչպես միշտ, այս դեպքում էլ քաղաքական իշխանությունները կարող են ամբողջ մեղքը բարդել բանակի վրա և արդարանալ պատերազմական իրավիճակով: Միաժամանակ առաջարկում ենք վերնագրի <հանցագործություններ> բառը փոխարինել <եղեռնագործություններ>-ով:

2. Անտարակույս հեղինակը պատմագիտական ծանրակշիռ փաստերի օգնությամբ ապացուցում է Վանանդի /Կարսի/ և Շիրակի նահանգներում 1920-1921 թթ. տեղի ունեցած զանգվածային կոտորածների իրողությունը, սակայն անչափ քիչ նյութեր են վերաբերում դրանց նկատմամբ թե ներքին, և թե արտաքին արձագանքներին կամ լռության պատճառներին: Երբեմն այնպիսի տպավորություն է ստեղծվում, որ կամ Հայաստանում իշխանություններ գոյություն չեն ունեցել կամ էլ լռելայն հետևել են այդ ամենին: Բացառություն են կազմում արտգործնախարար Ա. Մոավյանի խնդրանքը Լեզրանին՝ կոտորածները կանխելու վերաբերյալ /էջ 47/, ինչպես նաև մեկ երկու կցկտուր փաստեր: Մեր կարծիքով, աշխատանքն ավելի կշահեր, եթե հեղինակն աշխատանքում խիստ հակիրճ ներկայացներ Իջևանում Հայհեղկոմի՝ աշխատավորությանն ուղղված դեկլարացիան, մասնավորապես <աշխատավորական> Թուրքիայի նկատմամբ ունեցած

հավաստիացումները, իսկ մյուս կողմից զանգվածային հանցագործությունների հանդեպ նույն Հայհեղկոմի համարյա քար անտարբերությունը:

Այս նույն համատեքստում 49-րդ էջում ատենախոսը նշում է, որ Ղարաքիլիսայի հեղկոմը մերժեց օգնել Վրաստանից եկող գաղթականներին: Իսկ թե ինչու, նորից ոչ մի բացատրություն: Ընդամենը նշվում է, որ իբր նման լիազորություն չունի:

3. Աշխատանքն ավելի կշահեր, եթե հեղինակը չբավարարվեր միայն դեպքերի նկարագրությամբ: Անհրաժեշտ է փաստառատ նյութը ենթարկել լուրջ պատմագիտական, քաղաքական, իրավական վերլուծության:

4. Մեր համոզմամբ, ատենախոսության 3-րդ գլուխը՝ «Մեծ Եղեռնի և 1920-1921 թթ. թուրքական բանակի իրագործած հայերի զանգվածային կոտորածների համեմատական վերլուծություն» չպետք է բաժանել երկու ենթագլուխների: Ըստ էության երկուսի դեպքում էլ խոսքը նույն հիմնահարցի մասին է, մանավանդ որ նյութի ծավալը սակավ է: Միաժամանակ ոչ մի համեմատություն չի արվում նույն ժամանակ Կիլիկիայում և Զմյուռնիայում տեղի ունեցած ջարդերի հետ:

5. Անդրադառնալով գյումրեցիների՝ թուրքերին «աղ ու հացով» դիմավորելու պատմությանը՝ հեղինակը փորձում է երբեմն արդարացնել ուրիշ հնարավորություն չունենալով կամ էլ հանձնվելու դեպքում քիչ զոհեր տալու պատճառաբանությամբ: Մինչդեռ մեր ազատագրական պայքարների պատմությունը հակառակն են ապացուցել, որ դիմադրության դեպքում զոհերի թիվն ավելի քիչ է լինում:


Կամ նույն շրջանում, նույն վայրում գյումրեցիների կողքին թուրքերին համառ դիմադրություն էր ցույց տալիս արցախյան ջոկատը: Համառորեն դիմադրեց նաև Ախալքալաքի գավառը և գաղթի չենթարկվեց: Վերջապես պետք է այդ ամենին տալ ճշմարիտ գնահատական, որի անհրաժեշտությունն այսօր ավելի կարևոր է:

6. Աշխատանքն ավելի կշահեր, եթե հեղինակն օգտագործեր պատմաբաններ Վլադիմիր Ղազախեցյանի «Հայաստանը 1920-1940 թթ.», Երևան, 2006թ. Վանիկ Վիրաբյանի «Հայաստանը և Անդրկովկասում եվրոպական երկրների ռազմաքաղաքական ներկայացուցչությունները 1917-1920 թթ.», Երևան, 2024թ., «Կարսի մարզը Հայաստանի Հանրապետության կազմում /1919 Ապրիլ-1920 Հոկտեմբեր/ Կարսի նահանգապետ Ստեփան Ղորղանեանի յուշերը», աշխատասիրութեամբ Վլադիմիր Յարութիւնեանի, Երևան, 2018թ. և այլ աշխատությունները:

Անտարակույս, նշված դիտողություններն ու ցանկությունները ավելի կատարյալ գիտական աշխատանք ունենալու նպատակ են հետապնդում, չեն նսեմացնում հեղինակի կատարած աշխատանքը: Այն ամբողջովին համապատասխանում է Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի կողմից ներկայացվող պահանջներին և պատրաստ է հրապարակային պաշտպանության: Հեղինակն էլ արժանի է իր իսկ հայցած պատմական գիտությունների թեկնածուի Է.00.01 «Հայոց պատմություն» մասնագիտությամբ գիտական աստիճանին:


Կարծիքը հաստատված է ամբիոնի 2024 թ. սեպտեմբերի 5-ի նիստում /արձանագրություն թիվ 2/:

Խ. Արովյանի անվան ՀՊՄՀ Հայոց պատմության  
ամբիոնի վարիչի պաշտ.



պրոֆ. Է. Գևորգյան

Պատմ. գիտ. թեկնածու, պրոֆեսոր Է. Գևորգյանի  
ստորագրությունը հաստատում են:  
ՀՊՄՀ գիտ. քարտուղար



դոց. Մ. Իսպիրյան

05.09.2024 թ.

